

**ՀՀ Կառավարության և
Համաշխարհային բանկի
գործընկերություն**

**«Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների
զարգացման ծրագիր»**

Հանրային-մասնավոր ներդրումներ (ՀՄՆ)

Հայաստանի զբոսաշրջության ոլորտի զարգացում

Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների գարգացման ծրագիր

Համաշխարհային բանկն աջակցում է ՀՀ կառավարությանը Տեղական Տնտեսության և ենթակառուցվածքների Չարգացման Ծրագրով (ՏՏԵՉԾ), որի նպատակն է խթանել տնտեսական աճը և զբաղվածությունը Հայաստանի ինը մարզերում (Արագածոտն, Արարատ, Գեղարքունիք, Կոտայք, Լոռի, Շիրակ, Սյունիք, Տավուշ և Վայոց Ձոր): ՏՏԵՉԾ նպատակներից է՝ բարելավել ենթակառուցվածքների որակը, աջակցել զբոսաշրջության զարգացմանը, ստեղծել նպաստավոր միջավայր մասնավոր հատվածի ներդրումների ներգրավման համար: Ակնկալվում է, որ ՏՏԵՉԾ հարող համայնքների վրա կունենա հետևյալ ուղղակի ազդեցությունը՝ զբոսաշրջային գործունեության զարգացում, աղքատների և խոցելի խավի եկամուտների ավելացում (եկամուտներ զբոսաշրջային ոլորտից, ինչպես նաև բարելավված ենթակառուցվածքներից) և երկրորդական ազդեցությունը՝ ոչ զբոսաշրջության ոլորտներում զբաղվածություն՝ շինարարական աշխատանքներ, հյուրանոցներին մատակարարող ֆերմերներ և այլն; և դիմամիկ ազդեցություններ, որոնք ձևավորում են տեղական տնտեսության աճի աղբյուրները: Բացի այդ ՏՏԵՉԾ նպատակն է աջակցել նշված շրջանների բնակիչներին և ձեռնարկություններին: Ակնկալվում է, որ բնակիչները, զբոսաշրջիկները և ձեռնարկությունները կստանան հանրային ենթակառուցվածքների բարելավում և որակի բարձրացում, տարածաշրջանում մասնավոր հատվածի ներդրումների ավելացում; մշակութային ժառանգության վերականգնված վայրերում և քաղաքներում փոքր և միջին ձեռնարկությունների ավելացում: Կառավարությանը օգուտ կբերի զբոսաշրջիկների ծախսերի աճը, աշխատատեղերի ստեղծումը, ընտրված գործակալությունների ինստիտուցիոնալ կարողությունների բարելավումը: ՏՏԵՉԾ բաղադրիչներից մեկը վերաբերվում է Հանրային ենթակառուցվածքի տրամադրում մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով:

Տարածաշրջաններում մասնավոր հատվածի ներդրումները խրախուսելու նպատակով, այս բաղադրիչի ներքո աջակցություն կտրվի Ծրագրի տարածքում ընտրված մասնավոր հատվածի անձանց, որոնք շահագրգիռ կլինեն և կարող՝ զբոսաշրջության և ագրոբիզնեսի միջոցով հանրային ենթակառուցվածքները համալրող ներդրումներ կատարելու համար, որոնք անհրաժեշտ են ապահովելու համար ներդրումների կենսունակությունը (օրինակ, ներդրումային ենթածրագրերի մոտակայքում գտնվող հասարակական կառույցներ, ճանապարհներ/ մայրթեր, ջուր/ջրահեռացում, հաղորդակցություն և այլն:)

Հանրային-մասնավոր ներդրումների (ՀՄՆ) նախաձեռնությունները ենթակա են ստուգման՝ իրավասության/համապատասխանության առումով, և հատուկ պայմաններ են սահմանվում ՏՏԵՉ Ծրագրի կողմից ֆինանսավորման համար, որն կատարվելու է ենթածրագրի համար սահմանված ընդհանուր ցիկլի համաձայն:

Ծրագիրն իրականացվում է Համաշխարհային բանկի վարկավորմամբ և ՀՀ Կառավարության համաֆինանսավորմամբ:

Ծրագրի բովանդակության պատասխանատունն է ՀՀ ԷՆ Չբուսաշրջության կոմիտեն, իրականացնող մարմինը՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը:

1. Մասնակցության պահանջները և առցանց դիմումի գրանցումը

Նախքան ներդրումային առաջարկի առցանց գրանցելը, ակնկալվում է, որ շահագրգիռ մասնավոր ներդրողները կծանոթանան ՀՄՆ ծրագրի հիմնական սկզբունքներին և ուղենիշներին: Համապատասխանության դեպքում նոր սկսեն լրացնել հայտը:

- Ներդրումները կարող են իրականացվել միայն տուրիզմի ոլորտում (օրինակ հյուրանոցներ, բուտիկ հյուրանոցներ, հատկապես ավանդական ճարտարապետությամբ և ներդաշնակ բնության միջավայրին, զվարճանքի կենտրոններ/ զբոսայգիներ, ցուցահանդես-արվեստի կենտրոններ, ձեռագործ արհեստանոցներ և հուշանվերների խանութներ, և այլն) և ագրոբիզնեսի ոլորտում:
- Այս ՀՄՆ մոդելը բացառում է ուղղակի բիզնեսի ֆինանսավորման կամ կապիտալի ներդրման հնարավորություններ: ՀՄՆ ծրագիրը նախատեսում է հանրային ենթակառուցվածքների (ճանապարհ, ջուր, կոյուղի, էլեկտրամատակարարում և այլ) կառուցման ֆինանսավորում միայն ներդրողի գործունեությունը ծավալվող տարածքից դուրս:
- Հանրային ենթակառուցվածքը կտրամադրվի մասնավոր հատվածի սեփականության և հանրային սեփականության սահմաններում: Ոչ մի միջամտություն մասնավոր սեփականության վրա չի ֆինանսավորվի:
- Ներդրողից կպահանջվի ներկայացնել ներդրումների պատրաստվածության հաստատումը: Մասնավորապես, հավաստացնող փաստաթղթերը, թե արդյոք ներդրողն ունի անհրաժեշտ կապիտալը կամ հաստատված առևտրային բանկերից վարկը: Անձի ներկայացրած ֆինանսական տեղեկատվության գաղտնիությունը երաշխավորվելու է:
- Եթե մասնավոր ներդրողը սկսնակ ձեռնարկատեր է, ապա նա պետք է ունենա կառավարման փորձ, ֆինանսական կայունություն, ձեռքբերումներ տարբեր ոլորտներում,
- Ներդրումային առաջարկները, որոնք ուղղված չեն զբոսաշրջության ու ագրոբիզնեսի ոլորտներին չեն ընդունվի ՏՏԵԶ Ծրագրի շրջանակներում ՀՄՆ-ի ֆինանսավորման համար,
- Ներդրողները պետք է ունենան սեփականության իրավունքի վկայական՝ մասնավոր հատվածի ներդրումների համար պահանջվող հողամասի և գույքի նկատմամբ,
- Մասնավոր ներդրումների և ՏՏԵԶ Ծրագրի ֆինանսավորման հարաբերակցությունը պետք է լինի առնվազն 4:1,
- Մասնավոր ներդրումների նվազագույն ծավալը պետք է կազմի 200 մլն դրամ,

- Առաջարկվող ներդրումները պետք է սոցիալ-տնտեսական օգուտ բերեն հարող տարածքների բնակիչների վրա,
- Արգելված են իրականացնել ներդրումներ հետևյալ տարածքներում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում, մշակութային ժառանգության հուշարձանների պահպանության գոտիներում, և ներդրումներ, որոնք կունենան ազդեցություն կարևոր բնակավայրերի և ակնհայտ գեղագիտական արժեքների կանաչ տարածքի, անտառների, ալպիական/ ենթալպյան մարգագետինների վրա, և որոնք կդասակարգվեն որպես «A» կատեգորիայի շրջակա միջավայրի ազդեցություն,2

Վերը թվարկված պահանջներին համապատասխանելու դեպքում ներդրողները կարող են անցնել հետևյալ հղումով՝ <https://mineconomy.am/page/880>, ներբեռնել և լրացնել հայտը (Հավելված 1), այնուհետև ուղարկել հետևյալ հասցեներով՝ stc@mineconomy.am (հեռ. 011597155), atdf@atdf.am, հեռ. (060 501560):

Նախքան հայտը լրացնել, ստուգել ծրագրին համապատասխանելու չափանիշները՝ պարտադիր լրացնելով ստուգաթերթիկը (Հավելված 2):

2. Չնահատման չափանիշներ

Հայտերը ստանալուց հետո ՏՏԵ2 Ծրագրի աշխատակիցները կընտրեն պահանջներին համապատասխանող հայտերը և կկապվեն ներդրողների հետ: Այնուհետև ներդրողը պետք է ներկայացնի ամբողջական ներդրումային փաթեթը, բաղկացած հետևյալ փաստաթղթերից.

- 1) Առաջարկվող ներդրումային նախագծի տեխնիկա-տնտեսական և ֆինանսական հիմնավորում, շրջակա միջավայրի ազդեցության գնահատում, ստեղծվող աշխատատեղերի քանակը և տեսակը,
- 2) Պահանջվող հանրային ենթակառուցվածքների մանրամասն նկարագրությունը և ծախսերի գնահատումը (կտրամադրվի ՀՏԶԿ կողմից),
- 3) Տեղեկանք վերջին 2 տարվա շահույթ/վնասի վերաբերյալ,
- 4) Հողամասերի և գույքի սեփականության վկայական,
- 5) Տեղեկանք, որ կազմակերպությունը լուծարման ընթացքում չէ/ գույքը արգելանքի տակ չէ,
- 6) Տեղեկանք ներդրողի/ընկերության ֆինանսական կայունության վերաբերյալ,
- 7) ISO /HACCP վկայագրերը, եթե առկա են:

Ստացված տվյալները մանրամասն ուսումնասիրելուց հետո Էկոնոմիկայի նախարարության և Կառավարության գնահատման խումբը կկատարի գնահատման և ընտրության գործընթացի վերջին փուլը:

Ստորև աղյուսակում ներկայացված է գնահատման չափանիշները.

Չափանիշներ	1 միավոր	2 միավոր	3 միավոր	4 միավոր	5 միավոր
Վերջին 2 տարվա միջին տարեկան շահույթը	<50,000	50,000 - 100,000	100,001 - 500,000	500,001 - 1,000,000	>1,000,000
Ինքնաֆինանսավորման և կառավարության կողմից պահանջվող ներդրումների հարաբերակցությունը	4-4.5	4.5-5	5-5.5	5.5-6	>6
Տարեկան եկամտի և պահանջվող ներդրումների հարաբերակցությունը	0.5-1.0	1.0-2.5	2.5-3	3-4.5	>4,5
Յուրաքանչյուր աշխատատեղի արժեքը (AMD)	>50,000	30,001- 50,000	15,001- 30,000	5,001- 15,000	<5,000

Գերակայությունը տրվելու է այն առաջարկներին որոնք կստանան ամենաբարձր միավորները և կհաստատվեն ՏՏԵՉ Ծրագրի կառավարման կոմիտեի կողմից: Առավելագույն միավորը 20 միավորն է: 10-ից պակաս ստացված առաջարկներ չեն դիտարկվի:

3. Պայմանագրի կնքում

Ընտրված ներդրողների հետ կստորագրվի հուշագիր Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ) հետ, որտեղ կնկարագրվի նախագիծը, նախնական աշխատանքների ցանկը և ժամանակացույցը յուրաքանչյուր կողմի համար: Վերոնշյալ հուշագրի ստորագրումից հետո ներդրողը (ները) պետք է նախապատրաստեն և ներկայացնեն ՀՏՀՀ համապատասխան փաստաթղթերը և նախագիծը:

Հետագայում կնքվում է պայմանագիր ներդրողի(ների) և ՀՏՀՀ միջև, մանրամասնորեն սահմանելով յուրաքանչյուր կողմի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև ծրագրի ֆինանսական պայմանները:

Կողմերից որևէ մեկը, նախատեսված որևէ պարտականություն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ կապված, իրավասու է գրավոր դիմել և ողջամիտ ժամկետ սահմանել կանխարգելման միջոցների համար: Կողմերի համաձայնության չկատարման դեպքում վեճը լուծվում է դատական կարգով: